


արքունիս Ստյ եւ ընդ Հռովմայ, վասն տալոյ յԱսպետսն՝ բերդորայս ինչ գորս Լեւոն Դ՝ ոչ եւս յուսալով զերծուցանել ՚ի բոնաբարութենէ այլազգեաց՝ վաճառել կամեր: Այլով հրովարտակա ՚ի նմին 1210 ամի՝ խոստանայր Լեւոն պարգեւել Ասպետացս եւ զԼարանտա քաղաք՝ յորժամ թէ Աստուծոյ յաջողելովն՝ կորգեսցէ յայլազգեաց. եւ գտուրս զայսոսիկ՝ ինքնական խնդրուածով՝ վաւերացուցանէր կոնդակօք Սրբազան Քահանայապետին (Իննովկենտի Գ): Դարձեալ յետ ամաց (1214) առեալ յասպետացն փոխ 30,000 ոսկի բիզանդ, տայր ՚ի գրաւական զՎաներ արան ՚ի Սլուն Գաւառի, եւ զբովանդակ գաւառն Ճկերոյ, մեծամեծ գիւղորայիւք եւ նաւակայիւք. այսմ յետկարի՝ զատ յայլոց իշխանաց՝ ստորագրեցին եւ ասպետքն, չորեքտասան թուով՝ յիրաքանչիւր անուանէ:



Հանգոյն սոցա՝ եւ Տաճարական ասպետաց կանուխ մուտ գտեալ էր ՚ի Կիլիկիա, եւ ձեռն օգնութեան տուեալ Բ Թորոսի ՚ի թափել զերկիրն. որոյ եղբայրն Սլեհ՝ եղբայրացեալ իսկ էր երբեմն նոցին, եւ ապա կարգուրաց լեալ. բայց մերումս Լեւոնի ոչ հաճոյացան սոքա, այլ եւ ընդդէմ նմին դարձան եւ ձեռն ետուն յԱնտիոքացիս, եւ իբրեւ ամս հնգետասան կազ եւ գժտութիւն էր ընդ նոսա եւ ընդ թագաւորն, որպէս յերկարագոյն ՚ի կարգին նշանակեսցի. այլ ուր ուրեմն հաշտութիւն եղեւ, եւ տեւեցին եւ սոքա եւս ՚ի Միսուան, զէթ ցմեճ արշաւանն Եգիպտացոց (1266). բայց եւ յետ այնր՝ յամի 1275 վկայի երեցուն եւս կարգաց ասպետացն ունել կալուածս ՚ի Հայս, ըստ կոնդակի միոյ Գրիգորի Ժ Պապի (13 մարտի, 1275):

Միւս եւ մեծագոյն եւս դաս օժանդակաց Լեւոնի էին տեղաբնակ եւ տեղատէր Պարոնայք օտարազգիք, որք եւ համարէին նմա լիճք կամ արգադիրք. ոմանք յառաջ քան զպայազատելն իւր հաստատեալք յերկիրն, եւ շատք առ իւրեւ, կամ ինքնական տուեալ զանձինս նմա ՚ի ծառայութիւն եւ ընկալեալ ՚ի նմանէ կալուածս, կամ հրաւիրեալք ՚ի նմանէ՝ նովին